

Հր. Պետրոսյան

ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԼՈՎԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոյությունների ստատիկ կամ դինամիկ տատմանները կարելի է կատարել տարբեր ուղղություններով: Այսպես՝ հալցականը կարելի է տատմաններով բնութագրական պլանով, բնագրկելով նրա բոլոր ֆունկցիաները, խմատները, շարահյուսական կերտությունները, կարելի է տատմաններով նաև իրեն կրող խնդրի հոյով, որ և նրա հիմնական նշանակությունն է: Հալցականը հոյովի նկատմամբ թերևս փոքրին կարգի տատմանները շատ ավելի նպատակահարմար ու առաջնահերթ է, քանի որ ամենից առաջ կրող խնդրի ֆունկցիայի հետ են կապված հալցականի ձևարանական լարահատկությունները:

Հալցականը հոյովի պատմությունն մի շարք հարցերի տատմաններով տնի խնչպես թերական, ալնպես էլ պրակտիկ անհրաժեշտություն: Պրակտիկ նշանակություն մասին մենք արդեն մի ատիվով խոսել ենք¹, խնչ փրարիրում է հալցականը հոյովի ձևարանական արժեքին բնութագրական և մասնափորձական՝ նրա ձևափոխման լարահատկություններին մասնակցող հարկերնում, ապա ալս հարցը կարելի է պարզարանել տեսական, պատմա-համեմատական քննությունով:

Մարզկանց դիտակցությունն մեզ կա ներդրածողի և կրողի (ներդրածողի) արամարանական կատեգորիան: Որեկ դրածողությունն մեզ մասնակցող տարկաներից մեկը կարող է մյուս տարկանների հանդեպ անհնալ պատմով կամ ակտիվ դրություն: Այսինքն դերը ավելի զեպքում պատկանում է ներդրածող տարկեկտին, պատմով դերը՝ կրող օրեկտին: Ներդրածողի և կրողի տարկալան հարաբերությունը քերականական արամահալտությունը կապվում է լարական սեռի և հոյովական կատեգորիայի հետ: Ուղղականի և հալցականի հոյովական կապի հատկանշական կողմն ալն է, որ նրանում գրեկտրվում է ներդրածողի և կրողի քերականական հարաբերություն: Ներդրածող տարկեկտը կարող է լինել անձ, շնչափոր ալլ էակ և անշունչ տարկալ Այսինքնություն տեսակիակց անձերի (մարդկանց) ներդրածողը էֆեկտը ավելի ուժեղ է, ավելի ուժքի դարնող, քան ալլ շնչափորներինը (կենդանիներինը): Այս տեսակեակց անշունչ տարկանները (իրերը) գրավում են փոքրին ակզր: Նշված տարկեկտությունները լարատեսակ ազդեցություն են անհնում ուղղական և հալցական հոյովների ձևարանական արամահալտություն վրա: Այս հանգամանքը ավելի ակնատ է դառնում քերականական սեռի տակալություն զեպքում:

Հնդեկրապական հիմք-լեզվում շնչափոր տարկանների անունների մեջ ձևարանորեն միափոխվում էին արական և իզական քերականական սեռերը, անշունչների մեջ՝ չեզք սեռը: Այս երեկություն լարահատկությունն ալն էր, որ

¹ Տե՛ս մեր «Հալցական հոյովի տատմանն մի քանի հարցեր» հոդվածը, «Սոցիալական մանկավարժ», 1956, № 8:

հոլովական սխառեմում շնչավորների ուղղականը և հայցականը խիստ տարբերվում էին, իսկ չեզոք սեռում ուղղականը և հայցականը ձևականորեն նույնն էին: Անձնական և մի քանի ցուցական դերանունների ուղղականը և հայցականը արական ու իգական սեռերի դեպքում ունեին տարբեր արմատներ: Բացի այդ՝ բոլոր շնչավորների համար եղել են նույնական վերջավորությունների ուղղականում առանձին, հայցականում առանձին:

Հոլովական սխառեմի, առհասարակ՝ ուղղական և հայցական հոլովների ձևաբանական վիճակը հնդեվրոպական հիմք-լեզվում միանգամայն համապատասխանել է խոսքի կառուցման պահանջներին: Մական հետադալում, ինչպես մնացած հոլովները, այնպես էլ ուղղական ու հայցական հոլովները, ենթարկվել են պատմական փոփոխությունների: Եվ ահա, եթե հնդեվրոպական հիմք-լեզվում շնչավոր ատարկաների անունների համար ուղղական ու հայցական հոլովները ունեին խիստ որոշակի ձևեր, ապա հնդեվրոպական շատ լեզուներ հետագա զարգացմամբ, փոփոխություն ենթարկվելով, կորցրին, կամ համարյա կորցրին, ուղղական ու հայցական հոլովաձևերը տարբերող հատկանիշները, որով և առաջացավ ներգործող և սուբյեկտի անվան և կրող (ներգործվող) օբյեկտի անվան հոլովական ֆունկցիաները շփոթելու վտանգը: Կորցրած հոլովական վերջավորությունների փոխարեն լեզուները դիմեցին նոր միջոցների: Եվ քանի որ ներգործողի և կրողի առարկայական հարաբերությունը քերականորեն արտահայտելու համար կան զանազան միջոցներ, ապա չորս-քանչյուր լեզու դիմեց այս կամ այն միջոցին՝ իր քերականական կառուցվածքի առանձնահատկություններին համապատասխան:

Որոշ լեզուներում (ֆրանսերեն, իտալերեն, անգլերեն և այլն) սկսեց խիստ նշանակություն ստանալ բառերի կաշուն դասավորությունը, որը ստիճանաբար դառնալով օրինաչափ երևույթ, կանխեց վերոհիշյալ վտանգը: Ժամանակակից անգլերենում, օրինակ, «The father loves the son» և «The son loves the father» պարզորոշ նշանակում են առջին դեպքում՝ «Հայրը սիրում է որդուն», երկրորդ դեպքում՝ «Որդին սիրում է հորը», ուրեմն՝ ներգործող սուբյեկտի անունը (քերականական ենթակա) նախորդում է կրող օբյեկտի անվանը (քերականական ուղիղ խնդիր): Որոշ լեզուներում սկսեցին հայցականի ձևական տարբերակման ֆունկցիա վերցնել նախդիրները, հոգերը կամ այլ մասնիկներ: Այս տեսակետից հոգերը առանձնապես կարևոր նշանակություն ստացան գերմաներենում, նախդիրը՝ գրարարում, իսպաներենում, ռումիներենում, նախդիրը և ետագիրը՝ իբրանական մի քանի լեզուներում: Հնդեվրոպական այլ լեզուներում, օրինակ, լատիշերենում, օսեթերենում, սլավոնական լեզուներում հայցականը դիմեց սևականի ձևին:

Այսպիսով՝ ուղղական և հայցական հոլովների ձևական նույնացումից հետո, այդ հոլովների ֆունկցիաները չշփոթելու համար, հնդեվրոպական մի շարք լեզուներ կլք որոնեցին հիմնականում հետևյալ ուղղություններով՝

ա) փոխեցին բառերի երբևեցի ազատ դասավորությունը կաշուն դասավորությամբ. կամ՝ բ) պահպանեցին բառերի ազատ դասավորությունը, բայց հայցականը զանազան միջոցներով (նախդիր, ետագիր, հոգ) տարբերեցին ուղղականի ձևից, վերջապես՝ գ) որոշ լեզուներում, այն էլ բառերի ազատ դասավորության պայմաններում, հայցականը վերցրեց այլ հոլովաձև:

¹ Այս մասին տե՛ս А. Мейс, Введение в сравнительное изучение индоевропейских языков, т. 2 301, 303, 340:

Այս միջոցները իրենց ուրույն արահայտությունը գտան հայերենի հայցականի զարգացման տարրեր էտապներում:

Հայերենի ուղղական և հայցական հոլովները չպահպանեցին հնդեվրոպական հիմք-լեզվի հոլովական համապատասխան վերջավորությունները և հընչյունական ճանապարհով ձևական նույնացման ենթարկվեցին: Այդ նույնացումը տեղի ունեցավ ոչ թե սոսկ առանձին հիմքերի բառերում, ինչպես այդ պատահեց սլավոնական լեզուներում, այլ եզակի թվի բառերում ընդհանրապես (ընդ որում՝ և՛ շնչավոր և՛ անշունչ առարկաների անունների ուղղականն ու հայցականը): Այս երևույթը ամենայն հավանականությամբ կապված է նաև շեշտի փոփոխության և քերականական սեռի վերջավորությունների կորուստի հետ:

Արդյունքն այն եղավ, որ հայերենը կանգնեց կրող օբյեկտի անունը ձևականորեն տարբերելու անհրաժեշտության առաջ: Հայերենի հայցականը դրա համար օգտագործեց զ- նախդիրը: Արդեն իսկ Ծ-րդ դարի դրականության մեջ մենք հանդիպում ենք զ- նախդրի այդ նպատակով օրինաչափ կիրառությանը: Այսպես, օրինակ՝ եզակի ուղղականում ունենք տուն, շուն, որդի, եզակի հայցականում՝ (զ)տուն, (զ)շուն, (զ)որդի, հոգնակի ուղղականում՝ տունք, շունք, որդիք, հոգնակի հայցականում՝ (զ)տունս, (զ)շունս, (զ)որդիս:

Ինչպես տեսնում ենք, հոգնակի հայցականը, բացի զ- նախդրից, ուղղականից տարբերելու այլ միջոց ևս ունի, այն է՝ -ս մասնիկը, որը հիմնականում հոգնակի վերջավորությունն է հայցականում: Սակայն -ս մասնիկը, իրեն հոլովակերտ մասնիկ, արդեն գրաբարում բավական թուլացել էր: Այդ երևույթում է նախ՝ զ- նախդրի օրինաչափ գործածությունից հոգնակի հայցականում, և երկրորդ՝ որ -ս մասնիկը հետագայում հեշտությամբ զիջեց ք, եր, ներ հոգնակիներին նույնիսկ այն պայմաններում, երբ այդ փոխարինումը ենթադրում էր հոգնակիում ուղղական և հայցական հոլովների ձևական լիակատար նույնացում:

Բառերի ազատ դասավորությունը հատուկ էր նաև գրաբարին: Ուղղական և հայցական հոլովների ձևական տարբերակման համար միանգամայն հարմար միջոց էր զ- նախդրի գործածությունը: Այդ երևում է, թեկուզ, հետևյալ օրինակներից. «Արամ ծնանի զԱրայն Գեղեցիկ» (Խոր., Պատմ., 31), «յորժամ դուստր զմայր անարգիցէ, և նու զկեսուր իւր, և կին զայր, և ծառայ զտէր, և եղբայր զեղբայր» (Եզն., Եղծ. ադ., 42—43): Բայց արդյոք բոլոր դեպքերում պե՞տք էր ձևականորեն տարբերակել կրող օբյեկտի անունը: Այսինքն՝ կա՞ր անհրաժեշտություն, որ բոլոր դեպքերում հայցականը ստանար զ- նախդիրը: Այդպիսի անհրաժեշտություն չկար, որովհետև ձևական տարբերակման կարիք զգում էր այն ուղիղ խնդիր հայցականը, որը խոսքի մեջ հանդես էր գալիս իբրև մտքի կոնկրետ առարկայի անուն: Երբ ուղիղ խնդիր հայցականը մտքի կոնկրետ առարկայի անուն չէ, հազիվ թե նա գիտակցվի ներգործողի ֆունկցիայով, մանավանդ այն դեպքում, երբ բուն ներգործող սուբյեկտը հանդես է գալիս որպես մտքի կոնկրետ առարկա (իսկ նրա անունը՝ քերականորեն որոշյալ):

Հոգնակերտ -ս մասնիկը իր հերթին թուլացնում է զ- նախդրի հոլովակերտ նշանակությունը հոգնակի հայցականում, որովհետև ինքը հայանի չափով կապված է այդ ֆունկցիայի հետ: Բայց քանի որ զ- նախդրի գործածությունը կապված է մտքի կոնկրետ օբյեկտի անվան հետ, իսկ իբրև մտքի

կոնկրետ օբյեկտ կարող է հանդես գալ ոչ միայն անձը (շնչավոր առարկան), այլև իրը (անշունչ առարկան), ապա զ- նախդիրը հնարավորություն է ստանում հոլովական վերջավորության ֆունկցիա վերցնել բոլոր առարկաների անունների որոշյալ խայցականում:

Այսպես, օրինակ. *սթէ Որմիզդն* զանառուց, զչորքոտանիս և զթընչունս, և զձիւնս և զամենայն ինչ՝ որ լարի և զեղեցիկ է՝ արար. և Արհմնն զգազանս չարս և զքոչունս պիղծս և զսողունս և զօձս և զկարինս և զամենայն փաստակար ճճիս» (Եղն., 101), *ապլ նոցա որպէս* զմորքն զգենումք, և ոչ ֆնասէ, և զմիսն և թէ և սիրտ ուրուք առնոյր և տաէր՝ ոչ ֆնասէր» (ն. ա., 47) և այլն:

2- նախդիրը հոլովակերտ նշանակությամբ առանձնապես ուժեղ ամրապնդվել էր հին հայերենի դերանունների հայցականում: Գրաբարի անձնական դերանունների ուղղականում ունենք՝ ես, դու, նա, ինքն, հայցականում՝ զիս, զքեզ, զնա, զինքն, նույնի հոգնակի ուղղականում՝ մենք, զուք, նոքա, ինքեանք, իւրեանք, հայցականում՝ զմեզ, զձեզ, զնոսա, զինքեանս, զիւրեանս, ցուցական դերանունների եղակի թվի ուղղականում՝ սա,՝ դա, նա և այլն, հայցականում՝ զսա, զդա, զնա և այլն, նույնի հոգնակի ուղղականում՝ սոքա, զոքա, նոքա, հայցականում՝ զսոսա, զդոսա, զնոսա, հարցական և հարարկական դերանունների եղակի ուղղականում՝ ո՞, ո՞վ, զի՞, զի՞նչ, որ, հայցականում՝ զո՞, զո՞վ, զի՞, զի՞նչ, զոր, նույնի հոգնակի ուղղականում՝ ո՞յք, որք, հայցականում՝ զո՞յս, զորս և այլն:

Հայոց լեզուն իր հետագա պատմական զարգացման ընթացքում, ինչպես քերականական կառուցվածքի մեջ ընդհանրապես, այնպես էլ հոլովական սիստեմում առաջ բերեց լուրջ, որակական փոփոխություններ: Փոխվեց նաև հայցական հոլովի ձևաբանական վիճակը, վերացավ հոգնակի հայցականի -ս մասնիկը, պահպանվելով միայն մի քանի բառերում՝ բառակազմական նշանակությամբ, հետևապես այդ մասնիկը կորցրեց հոգնակի իմաստի և հոլովական վերջավորության նշանակությունները: Ուղղական հոլովի -ք մասնիկը իր հոգնակի իմաստը պահպանեց մի քանի բառերում, կամ դարձավ բառակազմական մասնիկ, իսկ հոգնակիի վերջավորություններ դարձան -եր, -ներ մասնիկները: Եղակի և հոգնակի թվի հայցականի զ- նախդիրը վերացավ այն ընդհանուր օրինաչափությամբ, որով ընդհանրապես վերացան հին հայերենի հոլովակերտ նախդիրները:

Արեւելյան աշխարհաբարում հայցականի զ- նախդիրը ավելի վաղ է սկսել ընկնել, քան արեւմտյան աշխարհաբարում: Եվ իսկապես, աչքի առկացնելով արեւելյան աշխարհաբարի վաղ արտահայտությունների զրավոր հիշատակարանները, մենք հանդիպեցինք բաղաձայնի փաստերի, որոնք հաստատում են զ-ի վաղ ընկնելը հայցականում: Այսպես՝ *Եւ Տիթւլասան...* զնեցի իմ հալալ ընչիւքն Ուքանի որդեացէն Անագէքն, Մամիսուտն, Բագէքն, Բերդկալ ալգիւն... և Ճորթուլանց տունն» (Կար. Կոստ., Վիմ. տար., 11,—10-րդ դար), *Պարոնայքն* հողն ինձ տուին..., ևրկրի տնատեղն տուի վասն հողւո իմոյ վախմ ի սուրբ ուխտիս ի Գանձասարայ» (ն. ա., 56,—12—13-րդ դդ.):

17—18-րդ դարերում տեղի է ունենում զ- նախդրի համատարած կորուստ: Այս հանգամանքը անխուսափելիորեն նորից առաջ է բերում ներդործողի ու կրողի (ուղղականի ու հայցականի) ֆունկցիաները շփոթելու վտանգ: Բայց ի տարբերություն նախադրային հայերենի, այս նույնացումը արդեն

ստացվեց նաև հոգնակի թվում, որովհետև վերացավ նաև -ս մասնիկը հոգնակի հայցականում: Հոգնակի ուղղականի և հայցականի համար սովորական դարձավ եր, ներ մասնիկների կիրառությունը:

Արեմի՝ եզակի և հոգնակի հայցականները թե՛ որոշյալ, թե՛ անորոշ, թե՛ անձի (շնչավորի), թե՛ իրի (անշունչի) անունների դեպքում ձևով համընկան ուղղականին: Իրանց համար չկար ուղղականից տարբերվելու ձևաբանական որոշակի միջոց: Փունկցիաները շփոթելու վտանգն ակնհայտ էր: Եվ ահա հայերենը ելք որոնեց շնչավոր էականների (առանձնապես անձերի) անունների հայցականը ձևով ուղղականից տարբերելու համար: Չկար այնպիսի նախդիր, որը իր վրա վերցներ այդ ֆունկցիան, իսկ հոլովակերտ նախդիրները վերացել էին: Հոգերը չէին կարող այդ ֆունկցիան վերցնել իրենց վրա, որովհետև հոգերի ձևաբանական արժեքը հայերենում չէր նպաստում դրան:

Արեմայան աշխարհաբարը, ինչպես նշեցինք, համեմատաբար ավելի ուշ կորցրեց հայցականի զ- նախդիրը: Ամենից ուշ զ- նախդիրը ընկավ անձի (շնչավոր էականների) անունների հայցականում: Այսօրնայանը գրում է. «եզակի ու յոթնակի հայցականին սկիզբը կեկցուի զ- դիրը (որ նախդիր կըսուի), մանաւանդ ուր որ ուղղականի հետ շփոթելու վախ ըլլայ».— (ասիկա սովորաբար յատուկ անուանց ու դերանուանց հայցական է): Ջոր օրինակ. Մեր բանակն զթշնամին ցրուեաց» (Քնն. քեր., էջ 11):

Հայերենի զարգացման օրինաչափությունների պահանջով արեմտահայ գրական լեզուն և մի քանի արեմտահայ բարբառներ (կը ճյուղ) դիմեցին բառերի կայուն դասավորությունը: Ինչպես որ անգլերենում, ֆրանսերենում և այլ մի քանի հնդեվրոպական լեզուներում, այնպես էլ արեմտահայ գրական լեզվում ներգործող սուբյեկտի անունը (քերականական ենթակա) նախորդում է կրող օբյեկտի անվանը (քերականական ուղիղ խնդիր): Օրինակ՝ «Եթե լինիկ եղբայրը գտավ» (Արի. Արի., Ընտ. երկ., 16) դեպքում Սաթենիկ ենթակա (ուղղական հոլով) է, իսկ եղբայրը ուղիղ խնդիր (հայցական հոլով):

Այլ օրինաչափություն սկսվեց արեկելյան աշխարհաբարում: Փաստերը ցույց են տալիս, որ 17-րդ դարում և 18-րդ դարի սկզբին արեկելյան աշխարհաբարի գրավոր արտահայտություններում անձի (շնչավոր էականների) անունների հայցականը ձևով դուռնա նման է ուղղականին: Օրինակներ. «Ախր վերջըն սուլթան Իբրահիմ թագաւորն խեղեցին» (Չաք. Ազուլ. օրագրությունը, 31), «եղիազար Վարդապետն բերին էջմիածին» (ն. տ., 79), «... մարդիկն դրկի Մեղրի» (ն. տ., 154), «Մամատ անուն խանն... բռնել են» (ЭЗОВ, ЧОШЕ-НИЯ..., 258), «Իվան Կարապետն ողորկեցինք» (ն. տ., 357), «... ասա ինչպես դուք երեխայքն կումկրաէք» (Schr., Thes. I. arm., 328), «Նաղաշն թողել և ծարաւ ու բէռշ» (Օադ. Հովն., Բանասա., 5):

Վերևում մենք արդեն նշել ենք, որ բառերի ադատ, ճկուն դասավորություն պայմաններում, երբ ուղղական և հայցական հոլովների հնչյունական-ձևական համընկնման պատճառով՝ ներգործող սուբյեկտի անունը (քերականական ենթակա) և ներգործվող, կրող օբյեկտի անունը (քերականական ուղիղ խնդիր) զրկվում են ինքնուրույն հոլովաձևերից, շնչավոր էականների անունների դեպքում հայցականը դիմում է այլ միջոցի (հոլովաձևի):

Բնականաբար հարց է առաջանում, իսկ ինչու և հատկապես անձի և ապա ընդհանրապես շնչավորի անունների դեպքում է առաջ գալիս շփոթություն ուղղական և հայցական հոլովների ֆունկցիաների միջև: Ինչու և այն ժամա-

նակ, հնդկությունը պատկանում է, երբ չեղոք սեռի (անշունչ առարկաների անունների) դեպքում ուղղականը և հայցականը ձևով նույնն էին, չառաջացավ ուղղական և հայցական հոլովների ֆունկցիաների շփոթում:

Այս բացատրվում է նրանով, որ չեղոք սեռի (անշունչ առարկաների) անունների դեպքում, առանց շփոթություն, պարզ կերպով հասկացվում է, թե որն է ներգործող սուբյեկտի, որը՝ կրող օբյեկտի ֆունկցիայով: Շատ քիչ դեպքերում է, որ ներգործողի և կրողի հարաբերության մեջ ներգործողը իր է, իսկ կրողը՝ անձ (շնչավոր էակ):

Ներգործողի և կրողի առարկայական հարաբերության բնույթը այնպիսին է, որ երբ անցողական բաշի հետ հանդես են գալիս իրերի անուններ, սովորաբար երկու իրերից միայն մեկը կարող է ավելի գործողության մեջ ներգործող լինել, իսկ մյուսը՝ կրող: Այս արդեն հաստատվում է առանց դժվարության: Շրջանում է ամպը, կամ՝ «Նուտակված ամպերը քշեցին տառան հյուսիսից փչող ուժեղ քամիները» դեպքերից պարզ երևում է, որ քշել և տանել կարող են քամիները (քամին), իսկ քշվել (և տարվել) ամպերը (ամպը), հետևապես՝ ներգործող սուբյեկտը (քերականական ենթական) կլինի քամին (քամիները), իսկ կրող օբյեկտը (ուղիղ խնդիրը)՝ ամպը (ամպերը), անկախ այն բանից, թե դա ընկած է անցողական բաշից առաջ, թե՛ հետո, ենթական է նախադասված, թե՛ ուղիղ խնդիրը, մի խոսքով, անկախ բառերի դասավորությունից:

Այս մոմենտը ավելի ակնհայտ է այն դեպքում, երբ ներգործողը անձի (շնչավոր էակի) անուն է, իսկ կրողը՝ իրի: «Սուրիկը գիրքը գրեց սեղանին», «Աշոտը բաժակի ջուրը թափեց գետին», «Մենք այնտեղ տեսանք գեղեցիկ շատ վայրեր» օրինակներից պարզ երևում է, որ խոսողը երբեք նման կապակցություններում ներգործողի (քերականական ենթական) ֆունկցիա չի վերագրի գիրքը, ջուրը, վայրեր բառերին, հետևապես սրանք որևէ այլ միջոցի (հոլովածների) կարիք չունեն կրողի ֆունկցիան արտահայտելու համար:

Այլ է վիճակը, երբ երկուսն էլ անձի (շնչավոր էակի) անուն են: «Հայր սիրում է որդուն», «Մայրը գրեց աղջկան», «Շունը տեսնում է տիրոջը» արտահայտություններում, եթե չլինեք ընդգծված անունների ձևական տարբերությունը համապատասխան ուղղական ձևերից (հայրը, մայրը, շունը), ապա, որովհետև հայերենում բառերի դասավորությունը ազատ է, հավասարապես կենթադրվել նաև հակառակը, այսինքն՝ որ որդին է սիրում հորը, աղջին է գրել մորը, տերն է տեսնում շանը:

Այժմ կարող է հարց առաջանալ, իսկ ինչո՞ւ հատկապես հայցական հոլովով դրված՝ անձի (շնչավոր էակի) անունը պետք է նոր հոլովածների կամ այլ միջոցի դիմել: Եթե ուղղականը և հայցականը ձևով նույնն են դարձել, ապա մի՞թե ուղղականը պահանջ չէր զգում նոր հոլոված, նոր միջոցներ որոնելու, իր հիմնական հոլովական ֆունկցիան արտահայտելու և հայցական հոլովի հիմնական ֆունկցիայի հետ այն չշփոթելու համար:

Այս թերևս բացատրվում է նրանով, որ նախ՝ ներգործողի և կրողի առարկայական հարաբերության քերականական արտահայտության մեջ անձի (շնչավոր էակների) անունները ավելի շատ են լինում ներգործողի ֆունկցիայով (ուղղական հոլովով) և ավելի քիչ կրողի ֆունկցիայով (հայցական հոլովով), մյուս կողմից՝ ուղղական հոլովը անձի (շնչավոր էակների) անունների դեպքում (ինչպես և այլ դեպքերում) հանդես չի գալիս սոսկ որպես ներգոր-

ծող սուբյեկտի հոլով, այլ ավելին՝ իրեն գործողության սուբյեկտի հոլով: Հետևապես ուղղական հոլովով հանդես են գալիս ոչ միայն ներգործական բայերի ենթակաները, այլև չեղոք ու կրավորական բայերի ենթակաները: Բայց հայցականը անձի (շնչավոր էակների) անունների դեպքում միայն կրող (ներգործվող) օբյեկտի հոլով է:

Այսպես՝ անձի (շնչավոր էակների) անունների ծավալուն գործածությունը ուղղականում ամրապնդում է հոլովական ֆունկցիայի և հոլովական ձևի միասնությունը, իսկ նույն անունների սահմանափակ գործածությունը հայցականում, վերջինիս՝ ուղղական հոլովի հետ ունեցած «մրցություն» պայմաններում, թուլացնում է հայցականի ձևի ու ֆունկցիայի միասնությունը: Այդ է պատճառը, որ ձևական նույնության պայմաններում հայցականի ֆունկցիան շնչավոր էակների անունների դեպքում ավելի հեշտ է բաժանվում «իր ձևից» և որոնում այլ ձև, քան ուղղական հոլովի ֆունկցիան:

Որ իսկապես անձի (շնչավոր էակների) անունների հայցականի նոր ձև որոնելու շարժառիթները կապված են ուղղական-հայցական ձևական նույնացման հետ, այդ հաստատվում է նաև սլավոնական լեզուների օրինակով: Այսպես՝ ուսերենում իգական սեռի կրող ինդերի հայցականը չի դիմել սեռականի ձևին, քանի որ իգական սեռի հայցականը ձևով չի համընկել ուղղականին: Այդպիսի ձևական նույնացում առաջացել է միայն արական սեռի եզակի ուղղական-հայցականում, ուստի այդ հայցականն էլ դիմել է սեռականի ձևին: Հոգնակիում արդեն սեռականաձև հայցականը բացատրվում է անալոգիական անցումով:

Հայերենում 18-րդ դարի առաջին կեսերից, նախ մասնակի արտահայտությունների ձևով և ապա դարի կեսերից որոշակի օրինաչափությամբ սկըսվում է ծավալվել տրականաձև հայցականը անձի (շնչավոր էակների) որոշյալ անունների համար: Համապատասխան փաստեր ցուցադրում են էզովի հայտնի զրքի հայերեն (ուշ շրջանի) հատվածները, Նաղաշ Հովնաթանի վերջին շրջանի բանաստեղծությունները, Սալաթ-Նովայի երկերը, «Հայ աշուղներ» ժողովածուում բերված մի շարք երգեր:

Արդ քննենք հայցական-տրական ձևական անցման հետ կապված այլ հարցեր, ինչպիսիք են՝ ո՞րն է այդ անցման կրակետը, եթե կրակետը անձնական, ցուցական կամ հարցական դերանուններն են, ապա ի՞նչ օրինաչափությամբ է այդ անցել գոյականներին, մյուսը՝ ինչո՞ւ հայցականը դիմեց տրականի ձևին և ոչ թե այլ հոլովաձևի. և վերջապես ինչո՞ւ այդ անցումը սկըսվեց որոշյալ անուններից:

Ա. Տոմսոնը, անդրադառնալով հայերենում հայցական-տրական ձևական անցման հարցին, գրել է. «Տրականաձև հայցականի առաջացումը ես հատկացնում եմ առանձին բարբառների ինքնուրույն կյանքի շրջանին: Դժբախտաբար՝ ինձ մոտ չկան բոլոր տվյալները, որպեսզի թեկուզ մոտավորապես բացահայտեմ այդ հետաքրքիր երևույթի պատմությունը, որ մեզ արդեն հայտնի է ուսերենից, այսինքն՝ հայցականի փոխարինումը ուղղ. և սեռ. հոլովներով»¹:

* Տոմսոնը և Մսերյանցը գործածում են «սեռականի ձևով հայցական» արտահայտությունը, որ ճիշտ չէ: Հայերենում հայցականը վերջրել է ոչ թե սեռականի ձևը, այլ՝ տրականի:

¹ А. Томсон, Историческая грамматика современного армянского языка г. Тифлиса, СПб, 1890, էջ 184.

Հայերենում հայցական-տրական ձևական անցման ելակետի հարցը քննելիս, Տոմսոնը կարևոր տեղ չի հատկացնում դերանուններին, ավելին՝ ժըխտում է նրանց ունեցած դերը: Սակայն նա իրավացիորեն ուշադրություն է հրավիրում որոշ բայերի խնդրառություններին: Սլավոնական լեզուներում հայցական-սեռական ձևական անցման հարցը քննելիս, Ա. Մեյեն, Կ. Մյուլենրախը, Ա. Տոմսոնը և այլ լեզվաբաններ նշանակալից տեղ են հատկացնում դերանուններին, ոմանք նաև բայերի հայցականով և սեռականով խնդրառություններին:

Քննելով հայցական-տրական ձևական անցման հարցը հայերենում, Մ. Աբեղյանը այդ անցման ելակետը համարում է դերանունները, ընդգծելով նաև մի շարք անցողական բայերի (հաղթել, փասել, ողջունել և այլն) տրականով կրող խնդիր առնելու թողած ազդեցությունը: Ընդ որում, նշում է, որ նախապես տրականի ձևով հայցականը գործածվել է անձնական, ապա ցուցական դերանուններում, իսկ դրանից հետո՝ որոշյալ գոյականներում¹:

Հայցական-տրական ձևական անցման ելակետը դերանունների մեջ որոշելը արդարացիում է նրանով, որ դեռևս 17-րդ դարում և 18-րդ դարի սկզբներին, այսինքն այն շրջանում, երբ գրեթե չենք հանդիպում տրականաձև հայցականի, դերանունների մեջ այդ արդեն սովորական երևույթ էր դառնում: Օրինակ. «... որ մեզ ազատ է...» (ՅՅՅ, 319), «ի՜նձ փրչացրիր» (Նազ. Հովհ., 7), բայց նաև՝ «Աս դրին թագաւոր» (ՁԱՕ, 32), «Աս (Մուստաֆայ գուլի բէկն) տարան իւմ քաղաքս» (Ն. տ., 140):

Եթե գրաբարի հայցականում անձնական, ցուցական, հարցական դերանունները ներկայացնում են ասենք, զիս, զմեզ, զքեզ, զձեզ, զսա, զոսա, զդա, զդոսա, զնա, զոնա, զո՞. զի՞նչ ձևերը, ապա 17—18-րդ դդ. զ-ի կորուստով և տրականի ձևի անալոգիական ազդեցությամբ ունենք մոտավորապես այս ձևվերը՝ ինձ, մեզ, քեզ, նրան, նրանց, սրան, սրանց, դրան, դրանց. ո՞ւմ:

Որ այդ այդպես է, հաստատվում է նաև հետևյալով: Եկրողերը, երբ իր հայտնի գրքում վեր է լուծում արևելյան աշխարհաբարի հոլովաձևերը, անձնական, ցուցական դերանունների հայցականը բերում է զ-ով և առանց զ-ի, զքեզ և քեզ, զիս և ինձ, զնա և նա, իսկ գոյականների ուղղականը և հայցականը շնչավոր էականների անունների դեպքում ևս դնում է մի ձևի տակ²:

Իրաբարի անձնական դերանունների քննությունը ցույց է տալիս, որ երկրորդ դեմքի եզակի ու հոգնակի թվերում հայցական հոլովը ձևով տրականից տարբերվում է միայն զ- նախդրի առկայությամբ (եզ. ար. քեզ, հայց. զքեզ, հոգն. ար. ձեզ, հայց. զձեզ): Առաջին դեմքի անձնական դերանվան հոգնակի թվում նույն պատկերն է, ինչ որ երկրորդ դեմքի եզակի ու հոգնակի թվում, այն է՝ հոգն. ար. մեզ՝ հայց. զմեզ: Եվ ահա՝ հայոց լեզվի զարգացման հետագա շրջանում անձնական դերանունների երկրորդ դեմքի եզակի ու հոգնակի թվերի ու առաջին դեմքի հոգնակի թվի անալոգիայով առաջին դեմքի եզակի թվի հայցականը (զիս) ձևով նմանվում է տրականին (ինձ), առաջանում է ինձ ձևը հայցականում:

Այս պրոցեսին, իհարկե, մեծապես նպաստել է զ- նախդրի ընկնելը հայցականում: Անալոգիական նորակազմությունը ընթացել է զ- նախդրի անկման պրոցեսին զուգահեռ:

¹ Տե՛ս Մ. Աբեղյան, Աշխարհաբարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912, էջ 98—99 և Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1931, էջ 349:

² Տե՛ս Schröder, Thes. ling. arm., 307—311.

Մի քիչ այլ ձևով է կատարվել երրորդ դեմքի անձնական դերանվան տրական-հայցական ձևական նույնացումը: Գրաբարում անձնական դերանվան երրորդ դեմքի եզակի թվի տրականում եղել է նմա ձևը (հոգնակիում՝ նոցա), սեռականում՝ նորա, հայցականում զնա: Պետք է ենթադրել, որ հնչյունական համընկնում առաջացել է նախ սեռական և տրական հոլովներում:

Որ այս կարող է այսպես կատարված լինել, կարող ենք հաստատել ուրիշ դերանունների օրինակով:

Սկրողերը իր «Հայոց լեզվի դանձ» (Ամստերդամ, 1711, 312) աշխատության մեջ բերելով հարցական դերանունների հոլովական ձևերը (արևելյան աշխարհագրորդ վերաբերող հատվածում)¹ սեռականում և տրականում դնում է ո՞ւմ ձևը, հայցականում՝ ո՞վ, իսկ հայտնի է, որ գրաբարում միայն տրական է ո՞ւմ եղել, սեռականը՝ ո՞յր (ո՞ւր), հայցականը՝ զո՞, զո՞վ: Նշանակում է՝ Սկրողերի ժամանակ հայերենում (աշխարհագրորդ) արդեն սեռական և տրական հոլովների համար կար նման ում ձևը, իսկ հայցականը դեռևս չէր նմանվել տրականին, ինչպես ունենք ժամանակակից հայերենում (սեռ. տր. հայց. = ո՞ւմ): Ուրեմն՝ երրորդ դեմքի նմա ձևը դարձել է նրա(ն), իսկ սա առաջին և երկրորդ դեմքերի անալոգիայով հայցականում ևս դարձել է նրա(ն):

Այս բոլորի արդյունքը լինում է այն, որ անձնական դերանունների բոլոր դեմքերի ու թվերի հայցականը ձևով համընկնում է տրականին: Ցուցական դերանունները եզակի ու հոգնակի թվերում, անձնական դերանունների անալոգիայով, հայցականը կազմել են տրականի ձևով: Թեև այս պրոցեսին նպաստել է նաև այն, որ նա անձնական և նա ցուցական դերանունների արմատները նույնն են: Եվ, վերջապես, ինչպես նշեցինք, ձևական նույնացում է առաջացել նաև հարցական դերանվան մեջ:

Անձի (շնչավոր էակների) անունների դեպքում հայցական-տրական ձևական անցումը պատմականորեն կատարվել է հայցական ու տրական հոլովների ձևա-իմաստային ընդհանրությունների բազայի վրա: Այդ ընդհանրությունները ընդգրկում են մոտավորապես հետևյալ մոմենտները.

ա) Անձնական, ցուցական, հարցական դերանուններում հայցական և տրական հոլովների համար համընկնող ձևերի առաջացում:

բ) Հայերենին հատուկ՝ մի շարք անցողական բայերի տրականով խնդիր առնելը¹:

գ) Դեռևս գրաբարում մի քանի անցողական բայերի (մանավանդ պատճառականների) խնդրառություն տառանումները տրական-հայցականում և ընդհանրապես հայերենին հատուկ՝ որոշ անցողական բայերի խնդրառություն տառանումները այդ հոլովներում՝ կապված բայիմաստի այս կամ այն բնույթի երանգավորման հետ (համեմ. «Ձգեցոյց նմա պատմուճառն բեհեզ» և «Ջամենայն զմերկսն զգեցուցին», «Ուսուցանէր զձեզ առնել այնպէս» և «Ուսուցանէին զՅուդա» և այլն):

Հայցական-տրական ձևական անցումը պետք է դիտել իբրև անալոգիական անցում, անալոգիական նորակազմություն: Իսկ, ինչպես հայտնի է, անալոգիական նորակազմությունը լեզվի մեջ կարևոր նշանակություն ունեցող օրինաչափություն է:

¹ Այս կարգի խնդրառությունների մասին տես՝ նաև Ս. Սյուրնյան, Քնն. քեր., էջ 155, և Սոս. Պալաստյան, Ընդհանուր տեսություն արևելյան նոր գրաբար լեզուի հայոց, Թիֆլիս, 1870, էջ 71:

Ո՞րն է բնորոշը անալոգիական նորակազմության համար: Ընչպես են կատարվում, առհասարակ, քերականական կառուցվածքի մեջ անալոգիական նորակազմությունները:

Ամենից առաջ անհրաժեշտ է, որ քերականական կառուցվածքի այս կամ այն բնագավառում հին ձևերի սխառնված հակադիր որևէ նոր ձև հանդես գա: Որպեսզի այս նոր, դեռևս չծավալված և ինքնուրույն սխառնված չվերածված ձևը փոխարինի հին ձևերի սխառնվածը, անհրաժեշտ են որոշակի բարենպաստ պայմաններ: Դրանք էլ պետք է հին ձևերի սխառնված նորով փոխարինելու հնարավորությունը դարձնեն իրականություն: Ամենաանհրաժեշտ պայմանն այն է, որ խառնված հին ձևերի սխառնված հիմքերը, այսինքն՝ հին ձևերի սխառնվածը այլևս չբավարարի քերականական կառուցվածքի նոր պահանջները: Այս պայմանի դեպքում նոր ձևը կենսունակ է և զարգացման, ծավալման տենդենցներ է ձևաքրքրում: Քերականական կառուցվածքի ավելի մասում կամայ-կամաց մահանում են հին որակի տարրերը և ծավալվում են նոր որակի տարրերը:

Այսպիսով՝ քերականական կառուցվածքի նոր պահանջների և հին ձևերի միջև առաջացած «կոնֆլիկտը» լուծվում է նրանով, որ նոր պահանջները չբավարարող հին ձևերի փոխարեն ստեղծվում են նոր ձևեր: Հնից նորին անցնելը, ավելի դեպքում, կատարվում է մասնակի՝ բայց կենսունակ ձևի ընդհանրացման ու ծավալման միջոցով:

Հնչյունական տեռակաից հայցականի և ուղղականի ձևական համընկնման հետևանքով հայցականի «հին» ձևը շնչավոր առարկաների, ամենից առաջ, անձի անունների դեպքում, այլևս չէր կարողանում արտահայտել ներգործողի, կրողի (ուղիղ խնդիր) քերականական ֆունկցիան: Հայցականի այդ ձևը այլևս չէր համապատասխանում քերականական կառուցվածքի նոր պահանջներին: Հարկավոր էր նոր ձև անձի, շնչավոր առարկաների անունների համար: Այդ նոր ձևը տրական հոլովի ձևն էր, քանի որ կրողի ֆունկցիայով հայցականը ավելի սերտ ձևաբանական ընդհանրություն մեջ էր տրական հոլովի հետ: Մկայում է աստիճանական անցում շնչավոր առարկաների, ամենից առաջ, անձի անունների հայցականի «հին» ձևից՝ տրականի ձևին: Տրականի ձևը, այս անգամ արդեն, որպես ներգործողի, կրողի (ուղիղ խնդիր) քերականական ֆունկցիայի ձև, իրապես նոր ձև է:

Հայցական-տրական ձևական անցումը նախապես ընդգրկել է անձի որոշյալ անունները, այս մասին տարրեր առիթներով դիտողություններ են արել Ա. Մելեն, Կ. Մլուկներախը, Ա. Տոմսոնը և ուրիշները: Եվ իսկապես, ներգործողի ու կրողի առարկայական հարաբերության մեջ, ամենից առաջ, այն առարկան կարող է ենթադրվել ներգործողի ֆունկցիայով, որը խոսքի ավելի մոմենտի հետ կապված է հայտնիության հասկանիչով և հետևապես որի անունը (գոյական) քերականորեն որոշյալ է: Իսկ լիժի այդ պեղան է, ապա հայցականը նախ անձի որոշյալ անունների (հատկապես հատուկ անունների) դեպքում կարող էր դիմել տրականի ձևին, հետո՝ անձի անորոշ և այլ շնչավորների որոշյալ անունների դեպքում, ավելի ուշ՝ այլ շնչավորների անորոշ անունների դեպքում:

Այդի անցկացնելով հալ նոր գրականության նշանավոր երկերը, մենք հնարավորություն ունեցանք բացահայտելու անձի և այլ շնչավորի անուն-

ների հատական-արական ձևական անցման օրինաչափ ընթացքը և նրա արդի վիճակը¹:

Հայցական հոլովի հետ կատարված այս պատմական փոփոխությունները աշխուստացնելով նրան չեն հանգեցրել անհետացման: Պահպանելով իր ֆունկցիան և այդ ֆունկցիան արտահայտելու ձևերը, հայցական հոլովը ձևով է բերել ձևարանական նոր որակ: Այդ որակի էությունը հայցականի ինքնատիպ ձևավորվելու մեջ է կայանում:

Հայցականի ձևարանական արժեքի գնահատման հարցում եղել են տարակարծություններ: Այս տեսակետից արժե հիշատակել մեծանուն հայագետներ Մ. Արեղյանի և Ստ. Մալխասյանի հայտնի վեճը:

Եթե հանգամանորեն քննում ենք կրող խնդիր հայցականի ձևարանական արդի վիճակը, ապա միանգամայն ակներև է դառնում այն, որ հայցականը ինքնուրույն հոլովական ֆունկցիա ունենալու հետ միաժամանակ ունի ինքնատիպ ձևավորում:

ժամանակակից հայերենում կրող խնդրի հայցականի ինքնատիպ ձևավորման առանձնահատկությունները հիմնականում հետևյալներն են:

Անձի հատուկ անունները, որպես կանոն, կրող խնդիր լինելու դեպքում հայցականը կազմում են արականի ձևով. «Պիոներները շրջապատեցին ջոկատավար Արամիկն»:

Անձի հատուկ անունը երբ ցույց է տալիս իր, հայցականը չի կազմում արականի ձևով. «Ես մի քանի անգամ դիտել եմ «Չապաե» (կինոնկար), «Սուրիկն էլ տեսել է Կալինինը» (քաղաք):

Անձի հատուկ անունը հայցականը արականի ձևով է կազմում, երբ արտահայտում է տվյալ անձի կյանքը, գործունեությունը, աշխարհայացքը, ստեղծագործությունները՝ միասին վերցրած, այսինքն երբ նկատի չեն առնվում սոսկ նրա ստեղծագործությունները. «Նա բոլորից լավ դիտի Նալբանդյանին»:

Անձի հասարակ անունները, երբ որոշյալ են, շատ քիչ դեպքերում է, որ հայցականը չեն կազմում արականի ձևով: Այդ անունները՝ երբ կրող խնդիր են ունենալ բայի, հայցականը չեն կազմում արականի ձևով. «Երբ նա իր ընտրածն ունի» (Գ. Սևի., Խենհրան, 1, 47), «Ամեն գյուղում Միկիտան Սաքոն տներ յուր լրտեսները» (Պ. Պո., Երկ. Ժ., 1, 464), «Քեզ պես մարդը չունենամ էլ՝ կլինի» (Ավ. Իս., Երկ. Ժ., 3, 261):

Երբ անձի հասարակ որոշյալ անունը ցույց է տալիս իր (փոխաբերական նշանակությամբ), պահպանում է հայցականի նախկին (ուղղականին նման) ձևը², հայցականը կազմում է իրի անունների նման: «Ով է ծնել շողշողուն այս պատանին» (Սովետական Հայաստանը) — Գ. Սար., Հատընտ., 23:

Երբ անձի որոշյալ անունը ցույց է տալիս կենդանի (այլ շնչավոր էակ) փոխաբերական նշանակությամբ, կարող է հայցականը կազմվել որոշյալ արտա-

¹ Այս պրոցեսը մենք փաստական ցուցադրման ենք ենթարկել «Անձի (շնչավորի) իրի (անշունչի) քերականական կատեգորիան հայերենում» մեր անտիպ աշխատության մեջ:

² Անձի որոշյալ անունների դեպքերում երբեմն հայցականը պահպանում է իր նախկին ձևը նաև ժողովրդական ասացվածքներում, առածներում, դարձվածքներում. «Շունը տերը չի ճանաչում», «Տավարը կապով կկապեն, մարդը՝ լեզվով» և այլն:

կանի ձևով. «Ավագյանն իր անշնչացած ոսոխին (կատսին) գետին շարտեց» (Ն. Զար., Հաց., 19):

Ընդհանրապես ժամանակակից գրական հայերենին բնորոշ է անձի հասարակ որոշյալ անունների հայցականը որոշյալ տրականի ձևով կազմելը:

Անձի հասարակ անորոշ անունները կրող խնդրի հայցականը կազմում են կամ անորոշ տրականի ձևով, կամ պահպանում են հայցականի նախկին ձևը. այնպես որ այստեղ անալոգիական նորակազմությունը, այսինքն՝ տրականաձև հայցականի կիրառությունը դեռևս չի ավարտել իր պրոցեսը, գտնվում է, ինչպես ասվում է, լինելիության մեջ:

Բերենք մի քանի օրինակներ. «Նա մի ծեր հայր էր խնամում» (Դ. Սար., Հատընտ., 226), «էլ ինչո՞ւ են դրսից մարդ ուղարկում» (Ն. Զար., Հաց., 26), «Ռայկումը քեզ նոր քնկեր ուղարկեց» (Ն. տ., 33), բայց՝ «Գոլխոգի նախագահը հեռացրել է աշխատանքից մի ծուլ, անբարեխիղճ զոմապանի և մի գող պահակի» (Ն. Զար., Հաց., 139), «Նկարիչները նկարում են գեղեցիկ կանանց ու աղջիկներին» (Գ. Սևի., ԹԼՏ., 1, 40):

Այլ շնչավորների (կենդանիների) որոշյալ անունները հաճախ պահպանում են կրող խնդրի հայցականի նախկին (ուղղականին նմանվող) ձևը. «Գնա կովերը դաշտ քշի» (Ն. Զար., Հաց., 3), «Կովը մորթեցին» (Ն. տ., 4), «Վահանը ծախել էր Լրկու եզները» (Ն. տ., 160), «Նա խթանեց արարական նժույգը» (Գ. Սևի., ԹԼՏ., 2, 263):

Կենդանիների որոշյալ անունները կրող խնդրի հայցականը կազմում են տրականի ձևով մի շարք դեպքերում: Կենդանու անունը կարող է, բառիմաստի փոխարենական նշանակությամբ, ցույց տալ անձ. նման դեպքերում կենդանու անունը հայցականը կազմում է տրականի ձևով. «Կարմիր դրոշը հիտլերյան ցուլերին զրգուղ, խենթացնող դորևատորի կարմիր կերպան է» (Ավ. Իս., Երկ. Ժ., 4, 123), «Ի՞նչ միջոցի դիմի այդ աղունիկին (Մադինին) ձեռքից բաց չթողնելու համար» (Գ. Սևի., ԹԼՏ., 1, 90), «Աղվեսին (Կրիպսին) է խաբել» (Ն. տ., 234): Կենդանիների որոշյալ անունները հայցականը տրականի ձևով են կազմում, հաճախ կապված համապատասխան անցողական բառի բառա-իմաստային բնույթի հետ. այսինքն՝ կան այնպիսի անցողական բայեր, որոնց կենդանու որոշյալ անուն-հայցականը միշտ, կամ համարյա միշտ, կազմվում է որոշյալ տրականի ձևով. «Սկսեց էլի ծեծել եզներին» (Ն. Զար., Հաց., 79), «... որ լծկաններին լավ կշտացնեն» (Ն. տ., 74), «Լիզում էր ձագերին» (Դ. Դեմիրճ., Ընտ. պատմ., 60), «Խեղդում է զանգերին» (Հր. Քոչ., Բար., 430), «Վագրին կերակրում էին ձեռքից» (Գ. Սևի., ԹԼՏ., 1, 264):

Երբ անցողական բայը դործածված է բառիմաստի փոխարենական նշանակությամբ, այսինքն՝ ցույց է տալիս այնպիսի դործողություն, որը կարող է ունենալ միայն կրող անձ օրյեկտ, բայց սովյալ դեպքում ունի կենդանի (այլ շնչավոր) օրյեկտ, ապա կենդանու որոշյալ անունը հայցականը սովորաբար կազմում է տրականի ձևով. «Երգը հմայում է նույնիսկ գազաններին» (Հր. Քոչ., Բար., 385): Հմայվելը մարդկային զգացմունք է, և հմայվել կարող են միայն մարդիկ, բայց սովյալ դեպքում դործածված է այլ շնչավորի (գազանի) վերաբերյալ: Այսպես նաև՝ քաջալերել ձիերին, շներին, ոգևորել կովող ցուլերին և այլն:

Կան շատ անցողական բայեր, որոնց՝ կենդանու որոշյալ անուն կրող խնդիրը վերջնականապես չի ամրապնդվել տրականաձև հայցականում, թեև հաճախ ընդունում է այդ ձևը։ Այսպես, օրինակ, «Նա եկել էր կայարան՝ Ավագյանի կնոջ հավերքը ծախելու ուղևորներին» (Ն. Զար., Հաց., 56), բայց՝ «Մերկեն շատ էր գնացել քաղաք իր հավերից մի երկուսին ծախելու» (Դ. Դեմիրճ., Ընտ. պ., 104), «Գնա կովերը դաշտ քշի» (Ն. Զար., Հաց., 3), բայց՝ «Զվարթն սկսեց քշել եզներին» (Դ. Դեմիրճ., ն. տ., 104), «Փորձում էին որսալ Ավագյանի աղավնիները» (Ն. Զար., Հաց., 19), բայց՝ «Հյուրընկալ տանտերը աղավնիներին որսում է գիշերով» (ն. տ., 18)։ Այսպես նաև՝ մորթել կովը (կովին), տեսնել շունը (շանը), տանել ոչխարը (ոչխարին), ուտել գառը (գառանը) և այլն։

Փոխաբերական խոսքի մեջ, երբ շնչավորվում է իրը, կամ՝ իրի անունը ցույց է տալիս կոնկրետ անձնավորություն, հայցականը կազմվում է տրականի ձևով. «Հասոն քարերին էր դողացնում... զեփյուռին ողբացնում» (Վրթ. Փափ., Ընտ. երկ., 223), «Ես քեզ սիրում եմ, այնքան եմ սիրում, որքան չի սիրում թիթևորը նրազին, սոխակը վարդին, աշխարհն արևին և բույսը հողին» (ն. տ., 226)։

Անձի վերացական, հավաքական անունները, պետությունների անունները և այլ մի շարք անուններ (եզակի ու հոգնակի թվում)՝ կրող խնդրի հայցականը երբեմն կազմում են տրականի ձևով. «սիրել ժողովրդին, պարտիային, դեկավարությանը», «փառաբանել Սովետական Միությանը, Չինաստանին», «շախջախել ֆաշիզմին», «պախարակել բուրժուազիային ու բուրժուական պետությանը», «չեն կարող խաբել Մոսկվային» (անձի հավաքական անվան նշանակությամբ) և այլն։

Փոխանունները սովորաբար անձի անունների դեպքում, այսինքն՝ երբ ցույց են տալիս կոնկրետ անձնավորություն, հաճախ նաև՝ երբ ցույց են տալիս այլ շնչավոր էակ (կենդանի), կրող խնդրի հայցականը կազմում են տրականի ձևով. օրինակ՝ «Մեր դասարանում երեք գերագանցիկներ կան։ Դիրեկցիան որոշել է երեքին էլ պարգևատրել», կամ՝ «Մերկեն շատ էր գնացել քաղաք իր հավերից մի երկուսին ծախելու»։

Համանման օրինաչափություններ կարելի է գտնել նաև ում, լ, և ճյուղերի բարբառներում և կը ճյուղի մի քանի բարբառներում։

Հայցական հոլովի ինքնատիպ ձևավորվելու օրինաչափ դրսևորումները ժամանակակից հայերենում ցույց են տալիս, որ հայերենում հայցական հոլովը չի կորցրել իր որակը և զարգանում է ուրույն տենդենցներով։

Մենք այս համառոտ ակնարկով աշխատեցինք ցույց տալ, որ հայցական հոլովի ինքնատիպ ձևավորվելը հասկանալի է դառնում, եթե նրա ձևերը վերցնում ենք ոչ թե պատմական զարգացումից կտրված, այլ համեմատական ու պատմական ասպեկտով։